

Արձանագրություն թիվ 9

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2019թ Ապրիլի 29-ին

Օրակարգը՝

1. Ֆակուլտետի ՈւՆ նախագհի հաղորդումը կատարված աշխատանքների վերաբերյալ:
2. Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2018-19 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
3. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
4. Կուրսային աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր

1.Խորհրդի նախագահ Տ. Վ. Ղոչիկյան.

- Ներկայացնեմ այսօր մեր նիստում քննարկվող հարցերը: Գիտխորհրդի 16 անդամներից ներկա են 12-ը հետևաբար մեծամասնությունը ներկա է և կարող ենք սկսել խորհուրդը: Օրակարգի առաջին հարցը հարգելի պատճառով հետաձգում ենք մյուս նիստին: Անցնենք երկրորդ հարցին: Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյանի հաշվետվությունը ընթացիկ տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:

-Ամբիոնի վարիչ Ն.Ա.Դուրգարյան (հակիրճ ) Հաշվետու ուսումնական տարում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ղեկավարությամբ կատարվել և պաշտպանության են ներկայացվելու 5-ավարտական - “քիմիա” բաժինից և 2 ավարտական “Ֆարմացիայի ինստիտուտից, 9-ավարտական աշխատանք (ղեղագործական քիմիա՝ V-կուրս հեռակա բաժնից), 6-մագիստրոսական թեզ “Օրգանական քիմիա” մասնագիտությամբ: 2-մագիստրոսական թեզ “Ֆարմացիայի” ինստիտուտից, 2 –մագիստրոսական թեզ “Սննդի անվտանգություն” բաժնից: Ընդամենը 26 ուսանող:

Հաշվետու ուսումնական տարվա առաջին կիսամյակում ամբիոնում ֆակուլտետի տարբեր բաժիններից 16 ուսանող կատարել և պաշտպանել են կուրսային աշխատանքներ:

1. Քիմիայի բաժին IV կուրս – 9 ուսանող
2. Քիմիա բաժին III կուրս – 4 ուսանող, աննդի անվտանգություն -4 ուսանող
3. Դեղագործական քիմիայի բաժին V կուրս հեռակա - 9 ուսանող
4. Դեղագործական քիմիայի բաժին I V կուրս հեռակա -12 ուսանող

Հաշվետու տարում կատարվել է դասալսումներ և ստուգումներ: Թարմացվել են լաբորատոր աշխատանքների ուսումնական ծրագրերը: Հաշվետու ուս. տարում կատարված սոցիոլոգիական հարցումների արդյունքում ամբիոնի միջին գնահատականը կազմել է 4,70 միավոր: Ամբիոնը համալրված է որակյալ մասնագետներով, որոնք ուսումնական գործընթացին զուգընթաց զբաղվում են գիտահետազոտական աշխատանքներով: Արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնը հրապարակել է 5 արտոնագիր, 20 հոդված և 20 գեկուցման թեզիսներ: Եվս 10 աշխատանք գտնվում են տպագրության փուլում:

Ելույթ ունեցողին – հարցեր ուղղեցին պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյանը, Շ.Ա.Մարգարյանը, դոցենտ Ա.Ի.Մարտիրոսյանը

3. Տ.Վ.Ղոչիկյան - Օրակարգի հաջորդ հարցը՝ ասպիրանտների և հայցորդների ատեստավորում: Ըստ էության քիմիայի ֆակուլտետն ունի 5 հայցորդ և 3 ասպիրանտ: Ասպիրանտներից մեկը Մարիետա Զաքարյանը և հայցորդները ատեստավորվել են հոկտեմբերին տեղի ունեցած գիտխորհրդում: Ասպիրանտներից Աշոտ Մխիթարյանը ըստ էության չպետք է ատեստավորվի քանզի արդեն հայտնի է նրա պաշտպանության օրը ս/թ հունիսի 14-ին: Այսինքն ատեստավորման խնդիր ունի 1-ին տարվա ասպիրանտ Արեն Յուրիի Ամերբեկյանը: Ամբիոնից եկել է դրական կարծիք: Արեն Ամիրբեկյանը հաշվետու տարում տպագրել է 1 հոդված, կրթական մասից հանձնել է ստուգարքներ և իրականացրել է մանկավարժական պրակտիկան:

Որոշեցին – միաձայն քվեարկությամբ ատեստավորել Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Արեն Յուրիի Ամերբեկյանին:

- Ընթացիկ հարցեր բաժնում քննարկվելու է երկու հարց,- Տ.Վ.Ղոչիկյան

- 1. Քիմիայի ֆակուլտետի գիտխորհրդին է դիմել Քիմիայի ֆակուլտետի , քիմիա բաժնի բակալավրիատի IV-կուրսի ուսանող Ադոնց Հովհաննեսը՝ զինվորական ծառայությունից տարեկետում ստանալու համար, անհրաժեշտ երաշխավորագրի համար:

Հովհաննեսը ուսումնառության ընթացքում դրսևորվել է, որպես բանիմաց ուսանող, տպագրել է մի քանի հոդված, ՀՔԸ –ի կողմից կազմակերպված կոնֆերանսի ժամանակ արժանացել է 1-ին մրցանակին: Ուսումնառության ընթացքում գործուղվել է Մոսկվայի “Նիսմեյանովի անվան էլեմենտորգանական միացությունների ինստիտուտ” և Նիդերլանդների Գրոնինգենի քաղաքի համալսարան: 2018 թ-ին ճանաչվել է ՀՀ լավագույն ուսանող բնագիտության ոլորտում: Նա արժանի է ակադեմիական տարեկետում ստանալուն:

Գիտխորհուրդը որոշեց երաշխավորել Ադոնց Հովհաննեսին զինվորական ծառայությունից տարեկետում ստանալուն:

-2. Օրգանական քիմիայի ամբիոնի պրոֆ. Գ.Գ.Թոքմաջյանի և դոցենտ Լ.Վ.Կարապետյանի կողմից՝ Քիմիայի ֆակուլտետի գիտխորհուրդ է ներկայացվել “Սննդի քիմիա” վերնագրով ուսումնական ձեռնարկը՝ <<Սննդի անվտանգություն>> բաժնի ուսանողների համար: Ձեռնարկը ենթարկվել է ներամբիոնային գրախոսման և քննարկվել է օրգանական քիմիայի ամբիոնի նիստում(արձանագրություն թիվ 7): Ամբիոնի նիստից եկել է դրական որոշում: Ելույթ ունեցան Կ.Ռ.Գրիգորյանը, Ա.Ի.Մարտիրյանը, նրանք նշեցին այդ գրքի անհրաժեշտությունը: Այժմ ըստ կարգի ձեռնարկը պետք տրվի արտաքին գրախոսման.

Գիտական խորհուրդը միաձայն որոշեց տալ վերոհիշյալ աշխատանքը արտաքին գրախոսման Հայաստանի ազգային ազրարային համալսարան:

Գիտխորհրդի նախագահ,պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Գիտխորհրդի քարտուղար

Մ.Ա.Սամվելյան